

**ՀԱՅԱՍՏԱՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՖՈՐՈՒՄ**

**Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Հայաստան վերադարձողների վերաինտեգրման հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների ֆորումի (այսուհետ՝ ֆորում) նպատակն է՝ ապահովել ոլորտում առկա հիմնախնդիրների և մարտահրավերների քննարկումը, ինչպես նաև կուտակված փորձի փոխանակումը:
2. Ֆորումը Հայաստան վերադարձողների վերաինտեգրման հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների համագործակցության հարթակ է, որին անդամակցությունը կամավոր է:
3. Ֆորումի անդամ կարող է դառնալ ցանկացած պետական, միջազգային և հասարակական կազմակերպություն, որը գործունեություն է իրականացնում Հայաստան վերադարձողների վերաինտեգրման հիմնախնդիրների լուծման ուղղությամբ:
4. Ֆորումի անդամ կազմակերպություններն իրենց կողմից իրականացվող վերաինտեգրման ծրագրերի վերաբերյալ նկարագրությունները (պրոֆայլները) ներկայացնում են հայերեն՝ ըստ N1 հավելվածի, և/կամ անգլերեն՝ ըստ N2 հավելվածի:
5. Ֆորումի անդամ կազմակերպություններն իրենց կողմից իրականացվող վերաինտեգրման ծրագրերում տեղի ունեցած փոփոխությունների կամ նոր

ծրագիր սկսելու դեպքում ներկայացնում են դրանց վերաբերյալ նկարագրությունները (պրոֆայլները) ծրագրի մեկնարկից հետո 1 ամսվա ընթացքում:

## II. ՖՈՐՈՒՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԶԱՓԸ

6. Ֆորումն իր գործունեությունն իրականացնում է աշխատանքային հանդիպումների միջոցով, որոնք տեղի են ունենում առնվազն եռամսյակը մեկ անգամ:
7. Ֆորումի գործունեության քարտուղարության գործառույթներն իրականացնում է ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն պետական ծառայությունը (այսուհետ՝ ՄՊԾ), որը նաև մշակում է հերթական նիստի օրակարգը, լուծում նիստի անցկացման հետ կապված բոլոր կազմակերպչական ու տեխնիկական հարցերը և կազմում արձանագրությունները:
8. Ֆորումի անդամ յուրաքանչյուր կազմակերպություն, հարկ եղած դեպքում, կարող է հանդես գալ նիստ հրավիրելու առաջարկությամբ՝ այն գրավոր ներկայացնելով ՄՊԾ-ին:
9. Ֆորումի աշխատանքների կազմակերպմանը աջակցում է ՄՊԾ-ի և ՖՀՀՀ-ի (Ֆրանս-հայկական զարգացման հիմնադրամ) միջև կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում ստեղծված վերահստեգրման «մեկ պատուհան» ծառայությունը:
10. «Մեկ պատուհան» ծառայության վերահստեգրման հարցերով խորհրդատուն նաև վերադարձող միգրանտներին տրամադրելու է տեղեկություններ

վերահստեգրման նպատակով իրականացվող ծրագրերի, դրանք իրականացնող մարմինների, տրամադրվող աջակցության տեսակների մասին՝ անհրաժեշտության դեպքում վերջիններիս ուղղորդելով համապատասխան կառույցներ:

11. Կազմակերպությունները տեղեկացնում են իրենց մոտ ուղղորդված անձի հետ տարված աշխատանքների մասին «մեկ պատուհան» ծառայության վերահստեգրման հարցերով խորհրդատուին՝ վերադարձողների վերաբերյալ տվյալների շտեմարան ստեղծելու նպատակով:

### III. ՖՈՐՈՒՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12. Ֆորումն իր գործունեությունը ծավալում է հետևյալ հիմնական ուղղություններով.

- *վերահստեգրման ծրագրերի քննարկում,*
- *փորձի փոխանակում,*
- *տեղեկատվության տարածում:*

#### **Վերահստեգրման ծրագրերի քննարկում.**

13. Ֆորումի շրջանակներում կազմակերպվող աշխատանքային հանդիպումների ընթացքում քննարկվում են Հայաստան վերադարձի և վերահստեգրման հետ կապված խնդիրներ, դրանց լուծմանը միտված քայլեր, ոլորտի պետական քաղաքականությունն ու մարտահրավերները,

14. Ֆորումի մասնակից որևէ կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի հետ կապված խնդիրների առաջացման դեպքում՝ աջակցություն ցուցաբերելու հնարավորությունները և ձևերը,

15. Ֆորումի մասնակից որևէ կազմակերպության կողմից նոր ծրագիր մշակելու

դեպքում ծրագրային առաջարկությունների քննարկում և անհրաժեշտ խորհրդատվության տրամադրում,

16. Ֆորումի մասնակից չհանդիսացող որևէ կազմակերպության կողմից ոլորտին առնչվող ծրագրի իրականացման հետ կապված խնդիրների առաջացման դեպքում, ֆորումը քննում է աջակցության հնարավորությունները և ձևերը,

17. Ֆորումի մասնակից չհանդիսացող կազմակերպության կողմից ոլորտին վերաբերող նոր ծրագրի գաղափարի քննարկում, անհրաժեշտության դեպքում խորհրդատվության տրամադրում և մասնագիտական ուղորդում:

### **Փորձի փոխանակում**

18. Ֆորումի ձևավորման առաջնային նպատակներից է կուտակված փորձի ներկայացումը:

19. Ֆորումի շրջանակներում կազմակերպվող աշխատանքային հանդիպումների ընթացքում անդամ կազմակերպությունները ներկայացնում են իրենց կողմից իրականացվող ծրագրերը, դրանց իրականացման մեթոդաբանությունը և գործիքակազմը, իրականացված ծրագրերը և դրանց արդյունքները, վիճակագրական տվյալները:

### **Տեղեկատվության փարածում**

20. Ֆորումի գործունեության և մասնակից կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը կտեղադրվի ՄՊԾ պաշտոնական ([www.smsmta.am](http://www.smsmta.am)) և Տունդարձ ([www.tundarc.am](http://www.tundarc.am)) կայքէջերում, ինչպես նաև վերադարձի և վերաինտեգրման հարցերով ֆեյսբուքյան էջում: Տեղեկատվությունը տեղադրում են նաև շահագրգիռ կազմակերպություններն իրենց կայքէջերում:

21. Ֆորումի աշխատանքային հանդիպումները լուսաբանող նորությունները տեղադրվում են ՄՊԾ պաշտոնական կայքէջի նորությունների բաժնում:

22. Ֆորումի աշխատանքների վերաբերյալ մանրամասն տեղեկությունները տեղադրվում են Տունդարձ կայքում, մասնավորապես.

- *Ֆորումի մասնակից կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվություն, գործունեության ուղղությունները,*
- *Ֆորումի մասնակից կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի նկարագրությունը, նպատակները, բովանդակությունը և վերջնարդյունքները,*
- *Ֆորումի հանդիպումների բովանդակությունը՝ քննարկվող հարցեր, փորձի փոխանակման նպատակները, ներկայացված նյութեր (\*.ppt ներկայացումներ, դիդակտիկ նյութեր և այլն),*
- *ինչպես նաև հայտարարությունները և առաջարկությունները:*

23. Ֆորումի անդամների միջև ձևավորված վերադարձի և վերահնտեգրման հարցերով ֆեյսբուքյան խումբը հնարավորություն կտա.

- *մշտական առցանց կապ ապահովել բոլոր մասնակիցների միջև,*
- *փոխանակել նորություններ,*
- *տեղադրել հերթական նիստերի հրավերներն, օրակարգերն ու նիստերի արձանագրությունները.*
- *լուսաբանել իրականացվող ծրագրերը,*
- *թարմացնել կազմակերպությունների պրոֆայլները,*
- *ներկայացնել հաջողված փորձը. ծրագրերի նկարագրություններ, ծրագրերի իրականացման մեթոդաբանություն և գործիքակազմ,*
- *փոխանակել գրանտային ծրագրերի վերաբերյալ տեղեկությունները:*

**Կանոնադրությունը հավանության է արժանացել 2018 թվականի մարտի 27-ին տեղի ունեցած Հայաստան վերադարձողների վերահնտեգրման հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների ֆորումի առաջին հանդիպման ժամանակ**

**Վերաինտեգրման աջակցություն ցուցաբերող ծրագրերի բովանդակություն**

Կազմակերպության անվանում \_\_\_\_\_  
Ծրագրի անվանում \_\_\_\_\_  
Ծրագրի տևողություն \_\_\_\_\_  
Դոնոր(ներ) \_\_\_\_\_  
Նպատակակետ երկիր(ներ) \_\_\_\_\_  
Տեղական գործընկեր(ներ) \_\_\_\_\_  
Թիրախային խումբ(եր) \_\_\_\_\_  
Շահառու համարվելու չափանիշները \_\_\_\_\_  
Թիրախային մարզ(եր) \_\_\_\_\_  
Ծրագրով նախատեսված շահառուների քանակը \_\_\_\_\_  
Վերաինտեգրման աջակցություն ստացած շահառուների քանակը \_\_\_\_\_

Վերադարձի տեսակը (նշել վանդակում):

Կամավոր   
Հարկադիր

Վերաինտեգրման աջակցության տեսակը (նշել վանդակում) և յուրաքանչյուր շահառուին տրամադրված գումարի չափը (դոլարով, եվրոյով կամ դրամով)

Տեղեկատվության տրամադրում   
Իրավական, սոցիալական և հոգեբանական   
խորհրդատվություն  
Աջակցություն աշխատանք գտնելու հարցում

Նյութական աջակցություն (նշել գումարը)  \_\_\_\_\_  
Բնակարանային խնդիրների լուծման աջակցություն (նշել  \_\_\_\_\_  
գումարը)  
Բիզնես հիմնելու դրամաշնորհ (նշել գումարը)  \_\_\_\_\_  
Բիզնես հիմնելու փոխառություն (նշել գումարը)  \_\_\_\_\_  
Դասընթացներ/ՄԿՈԻ, լեզվի և այլն (նշել գումարը)  \_\_\_\_\_  
Բժշկական աջակցություն (նշել գումարը)  \_\_\_\_\_  
Կանխիկ (նշել գումարը)  \_\_\_\_\_  
Ծրագրային այլ գործողություններ: \_\_\_\_\_

**PROFILE**

**On Reintegration Assistance Projects**

Name of the organisation: \_\_\_\_\_

Name of the project: \_\_\_\_\_

Duration of the project: \_\_\_\_\_

Donor(s): \_\_\_\_\_

Destination country(s): \_\_\_\_\_

Local partner(s): \_\_\_\_\_

Target group(s): \_\_\_\_\_

Criteria (s) to be considered beneficiary: \_\_\_\_\_

Targeted region(s): \_\_\_\_\_

Number of beneficiaries intended by the project: \_\_\_\_\_

Number of beneficiaries having received reintegration assistance: \_\_\_\_\_

Type of return (Please tick the box):

Voluntary

Forced

Type of reintegration assistance (Please tick the box) and provided amount per beneficiary (in USD, EUR or AMD):

Provision of information

Legal, social and psychological counselling

Assistance in finding job

Material assistance (Please provide the amount)  \_\_\_\_\_

Assistance in housing (Please provide the amount)  \_\_\_\_\_

Business grant (Please provide the amount)  \_\_\_\_\_

Business loan (Please provide the amount)  \_\_\_\_\_

Trainings/VET, language, etc. (Please provide the amount)  \_\_\_\_\_

Medical assistance (Please provide the amount)  \_\_\_\_\_

In cash (Please provide the amount)  \_\_\_\_\_

Other relevant project activities: \_\_\_\_\_

\_\_\_\_\_